Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (փաստաթղթային կոդ՝ *Կ-704-05.08.2020-ՏՏԳԲ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում կատարել լրացում, որով օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունում «ստուգում» բառը կփոխարինվի «գործառույթ» բառով, իսկ 2-րդ և 3-րդ պարբերություններում «ստուգման» բառը կփոխարինվի «, վերահսկողություն իրականացնելու» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մաս	Առաջարկում ենք «29.1-րդ հոդվածով» բառերը փոխարինել «29.1-ին հոդվածի 1-ին մասով» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 6-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 6-րդ հոդվածով օրենքում լրացվող 26.1-ին հոդվածի 1-ին մասում «դիտարկման նպատակը» բառերից հետո լրացնել «ուղղությունը» բառով, ինչպես նաև լրացնել հետևյալ նախադասությամբ. «Դիտարկում իրականացնելու վերաբերյալ հրամանը տրվում է բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի տարածքային	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ստորաբաժանման ղեկավարի հիմնավորված զեկուցագրի հիման վրա:»:		
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 6-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 6-րդ հոդվածով օրենքում լրացվող 26.1-ին հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով. «ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսների և բնապահպանական օրենսդրության պահանջների խախտմամբ ձեռք բերված որսի, որսագործիքների, որսի գործիք համարվող այլ միջոցների առգրավում, որոնք տնօրինվում են սույն օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով.»	Ընդունվել է:	Ընդունվել է:
	ՀՀ կառավարություն	Նախագծի 6-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 6-րդ հոդվածով օրենքում լրացվող 26.1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով. «Դիտարկման արդյունքում կազմվում է արձանագրություն, որում նշվում են դիտարկում իրականացնող մարմնի անվանումը, դիտարկում իրականացնող անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, դիտարկվող սուբյեկտի անունը (անվանումը), խախտումներ հայտնաբերելու դեպքում նաև բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը (եթե հնարավոր է որոշել) և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

	ՀՀ կառավարություն	Նախագծի 6-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 6-րդ հոդվածով օրենքում լրացվող 26.1-ին հոդվածի 7-րդ մասում հանել «և պատասխանատվության միջոցներ կիրառելու համար» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
	ՀՀ կառավարություն	Նախագծի 6-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 6-րդ հոդվածով օրենքում լրացվող 26.1-ին հոդվածի 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինն իր պաշտոնական ինտերնետային կայքում պարտադիր տեղադրվում, ինչպես նաև վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակին տրամադրում է յուրաքանչյուր եռամսյակի ընթացքում կատարված դիտարկումների վերաբերյալ հաշվետվությունը, որում նշվում են դիտարկվող սուբյեկտի անունը (անվանումը), իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման համարը, հարկ վճարողի հաշվառման համարը (առկայության դեպքում), յուրաքանչյուր դիտարկվող սուբյեկտի մոտ իրականացված դիտարկման քանակի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև դիտարկման արդյունքները: Հաշվետվության ձևը սահմանվում է վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ղեկավարի հրամանով:»:		
	ՀՀ կառավարություն	Նախագծի 6-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 6-րդ հոդվածով օրենքում լրացվող 26.1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով. «10. Դիտարկումների հետ կապված վարույթի նկատմամբ կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթները:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
	ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 8-րդ հոդվածով օրենքում լրացվող 29.1-ին հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործունեության կասեցման մասին որոշումը, ինչպես նաև 6-րդ մասով նախատեսված գործողության կասեցման մասին որոշումը ենթակա են անհապաղ կատարման:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
	ՀՀ կառավարություն	Նախագծի 12-րդ հոդված	Առաջարկում ենք նախագծի 12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 12. Եզրափակիչ և անցումային դրույթներ Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն օրենքի 29.1-ին հոդվածը արդեն իսկ գործունեություն իրականացնող սուբյեկտների համար ուժի մեջ է մտնում սույն օրենքն ուժի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			մեջ մտնելուց մեկ տարի հետո:»:		

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ
«ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (փաստաթղթային կոդ՝ *Կ-704-05.08.2020-ՏՏԳԲ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք «համապատասխան փաստաթղթով: Փաստաթուղթը (այսուհետ՝ արտանետման թույլտվություն)» բառերը փոխարինել «համապատասխան փաստաթղթով (այսուհետ՝ արտանետման թույլտվություն): Արտանետման թույլտվությունը» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածում «ազտոտող» բառը փոխարինել «աղտոտող» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (փաստաթղթային կոդ՝ *Կ-704³-05.08.2020-ՏՏԳԲ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառերը փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 2. Օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետից հանել «, կամ ընդերքօգտագործողը դադարել է անհատ ձեռնարկատեր լինելուց» բառերը: 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ստուգմամբ արձանագրված սույն օրենսգրքի պահանջների և պայմանագրային		

			պարտականությունների խախտման վերացման համար տրված հանձնարարականի չկատարման վերաբերյալ ակտն ուժի մեջ է մտել, և ներկայացվել է ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին միջնորդագիր կամ բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ստուգմամբ արձանագրված սույն հոդվածի 5-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված իրավախախտման վերաբերյալ ստուգման ակտի բողոքարկման օրենքով նախատեսված ժամկետը լրացել է, և ներկայացվել է ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին միջնորդագիր»։»		